ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

10 հոկտեմբերի 2023 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

2023 թվականի հոկտեմբերի 10-ին, ժամը 10.00-ին, Երևանի ավագանու նստավայրում՝ Երևանի Արգիշտիի փողոց 1 հասցեում տեղի ունեցավ Երևանի նորընտիր ավագանու առաջին նիստը:

Երևան քաղաքի նորընտիր ավագանու առաջին նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Ստեփան Մաչյանը, Գևորգ Սիմոնյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Սաշա Կատվալյանը, Սասուն Մկրտումյանը, Արամ Դանիելյանը, Սոնա Թևանյանը, Սիրեկան Օհանյանը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանը, Երևանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր Ալեքսանդր Բադալյանը:

Հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ Ալեքսանդր Բադալյանը տեղեկացրեց, որ նիստին մասնակցում է Երևանի ավագանու 37 անդամ, ավագանու նիստն իրավազոր է:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Երևանի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N1 արձանագրությունը՝ Ալեքսանդր Բադալյանը ներկայացրեց ավագանու անդամներին, կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության անվանումը.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Տիգրան Ավինյան
2. Արմեն Փամբուխչյան
3. Նուարդ Վարդանյան
4. Լևոն Հովհաննիսյան
5. Սուրեն Գրիգորյան
6. Արմեն Գալջյան
7. Արթուր Իսպիրյան
8. Դիանա Քերոբյան
9. Ալեքսանդր Բադալյան
10. Տաթև Հովակիմյան
11. Մարատ Թոխյան
12. Հայկ Միրզոյան
13. Վլադիմիր Կիրակոսյան
14. Արման Բաբաջանյան
15. Զարուհի Աղաջանյան
16. Արման Հարությունյան
17. Նարեկ Մանուկյան
18. Նատալյա Սինորյան
19. Արամ Ազատյան
20. Կամսար Բաբինյան
21. Լուսինե Գևորգյան
22. Հակոբ Բալայան
23. Կիմա Աբրահամյան
24. Լուսինե Սարգսյան

«Ազգային առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Հայկ Մարության
2. Հայկ Գրիգորյան
3. Իզաբելլա Աբգարյան
4. Գրիգորի Երիցյան
5. Քրիստինա Վարդանյան
6. Պեդրո Զարոկյան
7. Իոսիֆ Կուբատյան
8. Սամվել Մելիքյան
9. Արաքսի Դիլանյան
10. Արամ Թորոսյան
11. Ռոբերտ Ծովյան
12. Նարինե Արամյան
13. Տիգրան Պետրոսյան
14. Սեդա Տեր-Մինասյան

«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝

1. Անդրանիկ Թևանյան
2. Զարուհի Փոստանջյան
3. Մանուկ Սուքիասյան
4. Սամվել Հարոյան
5. Դուստրիկ Մխիթարյան
6. Մեսրոպ Մանուկյան
7. Սամվել Հակոբյան
8. Ադրինե Ավագյան
9. Թաթուլ Պետրոսյան
10. Սոննա Աղեկյան
11. Գևորգ Ստեփանյան
12. Նարինե Հայրապետյան

«Հանրապետություն» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Արտակ Զեյնալյան
2. Սարգիս Մադաթյան
3. Անի Խաչատրյան
4. Տիգրան Տեր-Մարգարյան
5. Ռոմիկ Մխիթարյան
6. Գոհար Բալդրյան
7. Հայկ Սահակյան
8. Նելլի Ղարդյան

«Հանրային Ձայն» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Արտակ Գալստյան
2. Տիգրան Ուրիխանյան
3. Ամալյա Սարգսյան
4. Վահան Ավագյան
5. Վահե Եսայան
6. Անույշ Խուդավերդյան
7. Անուշ Գինոսյան

Ալեքսանդր Բադալյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 10-ի նիստի օրակարգը, որը, համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 65-րդ կետի, ընդգրկում է հետևյալ հարցերը.

1) Քաղաքապետի ընտրություն.

2) Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություն.

3) Ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

1. Օրակարգի 1-ին հարց - Քաղաքապետի ընտրություն:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 90-րդ կետով՝ նիստը վարող Ալեքսանդր Բադալյանը հայտարարեց, որ խմբակցությունները պետք է գրավոր առաջադրեն քաղաքապետի թեկնածուներ՝ խմբակցության անդամների առնվազն կեսից ավելիի ստորագրություններով:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 91-րդ կետով՝ թեկնածուների առաջադրման ժամկետի ավարտից հետո Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, որպես քաղաքապետի թեկնածու գրանցեց Տիգրան Արմենի Ավինյանին:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 92-րդ կետը՝ նիստը վարող Ալեքսանդր Բադալյանի կողմից ելույթի համար ձայնը տրվեց քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանին:

Տիգրան Ավինյանին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 93-րդ կետով՝ Ալեքսանդր Բադալյանը հայտարարեց քվեարկություն:

Ալեքսանդր Բադալյանը հայտնեց, որ քվեարկությունը իրականացվում է առանձին նախատեսված սեղանի շուրջ, որին ավագանու նիստին ներկա անդամները մոտենում են հերթականությամբ, ըստ այբբենական կարգի և քվեարկության համար տրամադրվում է մեկ ժամ ժամանակ:

Քվեարկությունը համարվում է սկսված ժամը 10.25-ին:

Քվեարկության ավարտից հետո՝ ժամը՝ 11.27-ին, քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանի կողմից կատարվեց քվեարկության արդյունքների ամփոփում և կազմվեց արձանագրություն, որը քվեաթերթիկների հետ միասին հանձնվեց նիստը վարող Ալեքսանդր Բադալյանին:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 106-րդ կետով՝ քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

1) քվեարկության մասնակցող ավագանու անդամների թիվը 37
2) անվավեր քվեաթերթիկների թիվը 0
3) վավեր քվեաթերթիկների թիվը 37
4) թեկնածուին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 32
5) թեկնածուին դեմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 5

Ալեքսանդր Բադալյան	Կողմ
Ամալյա Սարգսյան	Դեմ
Անի Խաչատրյան	Կողմ
Անույշ Խուդավերդյան	Դեմ
Անուշ Գինոսյան	Դեմ
Արամ Ազատյան	Կողմ
Արթուր Իսպիրյան	Կողմ
Արման Բաբաջանյան	Կողմ
Արման Հարությունյան	Կողմ
Արմեն Գալջյան	Կողմ
Արմեն Փամբուխչյան	Կողմ
Արտակ Զեյնալյան	Կողմ
Գոհար Բալդրյան	Կողմ
Դիանա Քերոբյան	Կողմ
Զարուհի Աղաջանյան	Կողմ
Լևոն Հովհաննիսյան	Կողմ
Լուսինե Գևորգյան	Կողմ
Լուսինե Սարգսյան	Կողմ
Կամսար Բաբինյան	Կողմ
Կիմա Աբրահամյան	Կողմ
Հակոբ Բալայան	Կողմ
Հայկ Միրզոյան	Կողմ
Հայկ Սահակյան	Կողմ
Մարատ Թոխյան	Կողմ
Նատալյա Սինորյան	Կողմ
Նարեկ Մանուկյան	Կողմ
Նելլի Ղարդյան	Կողմ
Նուարդ Վարդանյան	Կողմ
Ռոմիկ Մխիթարյան	Կողմ
Սարգիս Մադաթյան	Կողմ
Սուրեն Գրիգորյան	Կողմ

Վահան Ավագյան	Դեմ
Վահե Եսայան	Դեմ
Վլադիմիր Կիրակոսյան	Կողմ
Տաթև Հովակիմյան	Կողմ
Տիգրան Ավինյան	Կողմ
Տիգրան Տեր-Մարգարյան	Կողմ

Արմինե Վարդանյանը հայտարարեց, որ Երևանի քաղաքապետ է ընտրվել Տիգրան Արմենի Ավինյանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 111-րդ կետը՝ ելույթի համար ձայնը տրվեց Տիգրան Ավինյանին:

2. Օրակարգի 2-րդ հարց - Հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություն:

Ալեքսանդր Բադալյանը հայտարարեց, որ հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը բախշվել է հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջները, հետևյալ կերպ՝

1. Առաջին հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը.

Առաջարկության համար ձայնը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին:

Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը իրավական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Մարատ Թոխյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Մարատ Թոխյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - 35
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. Երկրորդ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը.

Առաջարկության համար ձայնը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին:

Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Ալեքսանդր Բադալյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Ալեքսանդր Բադալյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -32
դեմ – 5
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. Երրորդ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը.

Առաջարկության համար ձայնը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին:

Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Հայկ Միրզոյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Հայկ Միրզոյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -32
դեմ – 5
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. Չորրորդ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Հանրապետություն» խմբակցությանը:

Առաջարկության համար ձայնը տրվում է «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանին:

Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար ներկայացրեց Հայկ Սահակյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել «Հանրապետություն» խմբակցության անդամ Հայկ Սահակյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -31
դեմ – 3
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Նիստը վարող Ալեքսանդր Բաղալյանը հայտնեց, որ այժմ կկայանա հանձնաժողովների նախագահների տեղակալների ընտրությունը:

5. Առաջին հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Հանրային ձայն» խմբակցությանը.

Առաջարկության համար ձայնը տրվում է «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանին:

Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանը քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Վահան Ավագյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Հանրային ձայն» խմբակցության անդամ Վահան Ավագյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -37
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվել է միաձայն

6. Երկրորդ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը:

Առաջարկության համար ձայնը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին:

Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը իրավական հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Արման Բաբաջանյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արման Բաբաջանյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -37
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվել է միաձայն

7. Երրորդ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը:

Առաջարկության համար ձայնը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին:

Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը ֆինանսավարկային և տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Դիանա Քերոբյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Դիանա Քերոբյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -37
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվել է միաձայն

8. Ալեքսանդր Բադալյանը հայտնեց, որ չորրորդ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը պարզելու համար կատարված հաշվարկի արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» խմբակցությունները ստացել են հավասար գործակիցներ, ուստի, հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ ամրագրված կարգավորումները՝ հանձնաժողովի ընտրության և նրա նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրում կատարելու իրավունքը պետք է որոշվի խմբակցությունների փոխհամաձայնությամբ կամ վիճակահանությամբ:

Ելույթի համար ձայնը տրվեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանին՝ փոխհամաձայնության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար:

Արմեն Գալջյանը հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից քննարկման արդյունքում որոշում է կայացվել չորրորդ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի հերթական պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը զիջել «Հանրապետություն» խմբակցությանը:

Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի

մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի համար ներկայացրեց Գոհար Բալդրյանի թեկնածությունը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել «Հանրապետություն» խմբակցության անդամ Գոհար Բալդրյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -36
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

Նիստը վարող Ալեքսանդր Բադալյանը հայտարարեց, որ Երևանի ավագանու մշտական հանձնաժողովների կազմերը կհաստատվեն Երևանի քաղաքապետի կողմից՝ համապատասխան որոշմամբ:

3. Օրակարգի 3-րդ հարց – Ավագանու հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

Նիստը վարող Ալեքսանդր Բադալյանը տեղեկացրեց, որ ավագանու հաջորդ հերթական նիստն առաջարկվում է գումարել ս.թ. նոյեմբերի 21-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ -35
դեմ – 2
ձեռնպահ – 0

Առաջարկն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց ի գիտություն:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԴԱԼՅԱՆ**

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյան